ստորոտների մշակված հողերը. դրանք են Աֆուսի, Խոյգանի, Վերին և Ներքին Ախոռաների, Սանգիբարանի և այլն հողերը։

3) Ազապատի սար: Այս սարի մի ստն սկսում է Աշկերտ պարսկաբնակ գիւղից և երկարաձգւում է մինչև Նահրբխալաջը. ունի սակաւաջուր աղբիւրներ՝ միայն տեղ տեղ։

4) Փոշքոնի սար կամ Բախտեարի լեռնաշղթայ: Սա միայն համանուն լեռնաշղթայի՝ Փէրիայի հարաւային պատւարը կազմող մասն է, որ ունի առատ բուսականութիւն և ջուր։

5) Հեթումի սար: Սկսում է Զիգան գիւղից և ձգւում մինչև Դրախտակ. ջուր չունի։

6) Պուլուզի սար: Սա բռնում է երկու գիւղեր՝ Կուլամիր և Ինանլրճա. ջրից զուրկ է։

Այս լեռները գաւառի մէջ կազմում են անթիւ զարճալի հովիտներ և մեծ ու փոքր սիրուն ձորեր, որոնց լանջերը մեծ մասամբ ծածկված են դալար խոտերով։

Ջրերը: Այս գաւառում գտնւող մի քանի գետակներ, որ Զայենդէրուդի վերին օժանդակներն են, ամբողջ Փէրիայի շրջանի գեղեցկութիւնն ու զարդն են կազմում և որոնք սկիզբն են առնում Դոմբինայի, Բոյինի, Աֆուսի և Ախոռայի խորշերից և ապա ոլորապտոյտ հոսելով գրկախառնւում են իրենց մայր՝ Զայենդէրուդի հետ և անցնում Փէրիայի հարաւ-արևելեան երկարութեամբ, մեծ և փոքր առուներով ջուր մատակարարում աջ ու ձախ կողմերում գտնւած գիւղերին և այսպիսով ոռոգում բովանդակ գաւառը. ապա գետն այդտեղից ուղղելով ընթացքը դէպի արևելք՝ սկսում է հեռանալ Փէրիայի սահմաններից, գնում է մինչև Սպահան — Նոր-Զուղա, ուր և ոռոգում է նրանց սահմանները։ Զնայելով որ այս գետը նաւարկութեան չի ծառայում, բայց արտադրում է անուշահամ ձկներ։

Զայենդէրուդի Փէրիայի օժանդակներից անւանի են.— Նամակերտում մեծ և փոքր վտակները, որոնց գիւղացիներն